# Տարեկան հաշվետվություն

# 2022

# Բովանդակություն

Իրավախորհրդատվություն և ներկայացուցչություն

Բարձրագույն դատական խորհուրդ

Հակակոռուպցիոն ինստիտուտներ

Դատախազություն

Աշխատանքային վեճերով պրակտիկա

Ադրբեջանի պատերազմական հանցագործությունների փաստահավաք գործունեություն

Հրապարակումներ

Համատեղ հրապարակումներ

Միջոցառումներ

Մասնակցություն և մեդիա

Կապ մեզ հետ

# Իրավական խորհրդատվություն, ներկայացուցչություն






ԻՊԱՍ իրավաբանների ներգրավմամբ ընթացող վարույթներն առավելապես առնչվել են.

- ՀՀ տարածքային ամբողջականության պաշտպանությանը
- Հավաքների ազատության իրավունքի պաշտպանությանը
- Անձնական անձեռնմխելիության, ազատ տեղաշարժի իրավունքների պաշտպանությանը
- Արդարացվածին պատճառված նյութական և ոչ նյութական վնասների հատուցման հետ կապված հարցերին
- Աշխատանքային իրավունքների պաշտպանությանը
- Տեղեկատվության ազատության իրավունքի  պաշտպանությանը
- Սեփականության, այդ թվում՝ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությանը
- Խտրականության արգելքից՝ բանկային սպասարկման ոլորտում խտրականության դրսևորումներից զերծ լինելու իրավունքի պաշտպանությանը
- Արտակարգ դրության ժամանակահատվածում անձանց հիմնարար, այդ թվում՝ կյանքի իրավունքի պաշտպանությանը
- Բռնություն գործադրելու հրապարակային կոչերին, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու հետ կապված հարցերին
- Զինվորական ծառայության հետ կապված հարցերին
- Ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների հետ կապված հարցերին

# Բարձրագույն դատական խորհուրդ

**Գործունեության մշտադիտարկում**

- դատավորների թեկնածուների ընտրության գործընթաց
- դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթներ
  - վարույթի արդյունքում կայացված որոշումները

# Հակակոռուպցիոն ինստիտուտներ

**Հակակոռուպցիոն կոմիտեի մշտադիտարկում**

- ստեղծման գործընթաց
- նախագահի և ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրությունների գործընթացի մշտադիտարկում
- Կոմիտեի անկախության, հաշվետվողականության և թափանցիկության երաշխիքների, բյուջեի, ծառայողների վարձատրության և այլ հարցերի ուսումնասիրություն

**Հակակոռուպցիոն դատարանի մշտադիտարկում**

- ստեղծման գործընթաց
- օրենսդրության ուսումնասիրություն
- դատավորների թեկնածուների ընտրության մշտադիտարկում
- թեկնածուների պրոֆայլինգ

# Դատախազություն







Ուսումնասիրվել են Գլխավոր դատախազի և դատախազների ընտրության գործընթացի միջազգային և ներպետական իրավական կարգավորումները, դիտարկվել է դատախազների ընտրության բաց մրցույթը, դուրս են բերվել օրենսդրական և պրակտիկ խնդիրները

Ուսումնասիրել են նաև ՀՀ դատախազության համակարգի վերաբերյալ օրենսդրական կարգավորումների բացերն ու թերությունները մասնավորապես Գլխավոր դատախազի եւ դատախազների ընտրության եւ պաշտոնի նշանակման հարցում

# Աշխատանքային վեճերով դատական պրակտիկա

## 500 գործ է ուսումնասիրվել







բացահայտվել են  աշխատանքային իրավունքների իրավիճակի հետ կապված խնդիրներ՝ անձանց աշխատանքից ազատելու մասին հրամանների վիճարկման, աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների բռնագանձման, աշխատանքի էական հանգամանքների փոփոխության, կարգապահական տույժերի վիճարկման, կենսաթոշակի նշանակման, աշխատանքային ստաժի հաստատման և այլ հարցերի վերաբերյալ, ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են առաջարկներ

# Ադրբեջանի պատերազմական հանցագործությունների փաստահավաք գործունեություն




Փաստահավաք զեկույցում ներկայացվում են պատերազմական հանցագործություններ և միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների նորմերի այլ խախտումներ, որոնք տեղի են ունեցել գլխավորապես Արցախի բնակչության դեմ ՝ 2020 թվականի աշնանը Ադրբեջանի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմի ընթացքում և դրա հետևանքով: Ստացված արդյունքների հիման վրա ներկայացվում են պատերազմական հանցագործությունների և մարդու իրավունքների խախտումների հիմնավոր փաստարկներ, ինչպես նաև իրավիճակի կարգավորման վերաբերյալ առաջարկություններ՝ ուղղված համապատասխան շահագրգիռ կողմերին:

**ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեին Ադրբեջանի կողմից հայերի դեմ ռասայական խտրականության վերաբերյալ զեկույց**

Փաստագրել են ԼՂ-ում 2020թ.-ի պատերազմի ընթացքում Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները, ինչպես նաև Ադրբեջանի կողմից պետական մակարդակով իրականացվող հակահայկական քաղաքականության դրսևորումները:

## ԻՊԱՍ-ը միջազգային հարթակներում ներկայացրել է Արցախի և ՀՀ բնակչության դեմ Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտումները և պատերազմական հանցագործությունները

**2022թ. մարտ, Վիեննա**
ԵԱՀԿ կողմից կազմակերպված «Միջազգային համագործակցություն՝ ուղղված միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների խախտումների դեմ պայքարին» միջազգային համաժողով

**2022թ. հոկտեմբեր, Վարշավա**
ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի Մարդկային չափման հարցերով համաժողով

**2022թ. օգոստոս, Ժնև**
ՄԱԿ Ռասսայական խտրականության վերացման կոմիտեի 107-րդ նստաշրջան

**2022թ. հոկտեմբեր, Բրյուսել**
Հանդիպում ԵՄ-Հարավային Կովկաս համագործակցության հանձնաժողովների նախագահ Մարինա Կալյուրանդի հետ

**2022թ. դեկտեմբեր, Բրյուսել**
Եվրամիություն-Քաղաքացիական հասարակություն փորում

---

2022 թվականի դեկտեմբերին Ադրբեջանի կողմից **Լաչինի միջանցքի արգելափակումից** ի վեր ԻՊԱՍ-ը՝ քաղաքացիական հասարակության գործընկեր կազմակերպությունների հետ մի շարք միջազգային կառույցների և երկրների նամակներ է հղել

6

# Հրապարակումներ




Աշխատանքային գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրություն. աշխատանքային իրավունքի խնդիրները




Դատախազների կարգապահական պատասխանատվության հիմնահարցերը




Դատախազության համակարգում պաշտոնի նշանակման կարգը




Քննչական կոմիտեի գործունեության ուսումնասիրություն




Դատական իշխանության անկախության ապահովում ֆինանսավորման միջոցով




Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի դեմ դատական գործերի ուսումնասիրություն

# 2 հետազոտություն.

ՀՀ կառավարման կարգը եւ դատական իշխանության անկախության երաշխիքները սահմանադրության փոփոխությունների համատեքստում






ՀՀ-ում կարանտինի/արտակարգ և ռազմական դրության միաժամանակյա առկայության պայմաններում յուրաքանչյուրի հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի օրենսդրական երաշխիքները և դրանց իրացման մարտահրավերները

## 3 օրենսդրական առաջարկ.

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ և էլեկտրական ինքնագլորների կարգավիճակի և դրանց օգտագործման կանոնները օրենսդրորեն սահմանելու վերաբերյալ

## 5 հայտարարություն.

Բարձրագույն դատական խորհրդի կողմից կոռուպցիոն հանցագործությունների քննություն իրականացնող դատավորի ընտրության, ԲԴԽ անդամների թեկնածուների ընտրության վերաբերյալ, Ադրբեջանի գործողություններին համարժեք պատասխան տալու և փաստահավաք խմբեր տրամադրելու վերաբերյալ, ՀՀ ոստիկանությանքաղաքացիների նկատմամբ ապօրինի ուժային գործողությունների, Հատիս լեռան գագաթի օտարման եւ որպես պետության պահպանության ներքո գտնվող բնության հուշարձանի նկատմամբ պարտավորությունների խախտման վերաբերյալ

## 2 տեղեկատվական հոլովակ.

Դատական իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակը ՀՀ-ում և անկախացումից ի վեր ՀՀ կառավարման կարգի և կատարված փոփոխությունների վերաբերյալ

# Համատեղ հրապարակումներ

## 16 համատեղ հայտարարություն.

հանրային հնչեղություն ունեցող իրադարձությունների վերաբերյալ

## 5 զեկույց.

Ադրբեջանի կողմից հայերի դեմ ռասայական խտրականության վերաբերյալ, Ադրբեջանի կողմից Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի խախտումների, Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում մարդու իրավունքների խախտումների և այդ երկրում հակահայ քսենոֆոբիայի վերաբերյալ

## 4 կարծիք.

«Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծի , ՀՀ պետական բյուջե գումար վճարելու պայմանով շարքային կազմի կարճաժամկետ պարտադիր զինծառայություն անցնելու հնարավորություն նախատեսող փոփոխության, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու ևՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ ռազմավարության վերաբերյալ

# Միջոցառումներ

## 4 մարդու իրավունքների կրթության դասընթաց

«Մարդու հիմնական իրավունքները վարչարարության և վարչական արդարադատության շրջանակում» խորագրով և «Վարչական վարույթ և վարչական արդարադատության սկզբունքները, Մարդու իրավունքները վարչական վարույթում» թեմայով՝ ՀՀ կադաստրի կոմիտեի, ոստիկանության, հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Սոցապ նախարարության, ԱԱՏՄ աշխատակիցների, փաստաբանների համար:





## 3 քննարկում

2022-ին իրականացվել է 3 քննարկում՝ «Հակակոռուպցիոն ինստիտուտների ստեղծումը. մշտադիտարկման արդյունքները և խնդիրները», «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բարեփոխումները» և «Դատախազության գործունեությունը դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով:



«Դատախազության գործունեությունը դատաիրավական բարեփոխումների համատեքստում»



«Հակակոռուպցիոն ինստիտուտների ստեղծումը. մշտադիտարկման արդյունքները և խնդիրները»

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բարեփոխումները»



# Մասնակցություն և մամուլ

2022-ին ԻՊԱՍ իրավական հարցերով փորձագետները ներգրավվել են Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ.-ի ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի կատարման Մշտադիտարկման խորհրդի կազմում, ինչպես նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբում:

**30**
Ասուլիսներ և հանրային քննարկումներ

**4**
Մասնակցություն համաժողովների

**5**
Մասնակցություն խորհրդի նիստերի

**4**
Միջազգային այցեր

# Կապ մեզ հետ

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների
Երևան, Ամիրյան 11
+374(10) 505 303, +374(98) 505 303
info@prwb.am